««Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի միջոցով դեպի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ դրամական փոխանցումներ հեռախոսահամարի միջոցով» ծառայության պայմաններ

1. ««Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի միջոցով դեպի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ դրամական փոխանցումներ հեռախոսահամարի միջոցով» ծառայությունը հնարավորություն է տալիս «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձ հաճախորդներին միայն բջջային հեռախոսահամար տրամադրելով ստանալ «Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի միջոցով ՌԴ-ից ուղարկված փոխանցումներ՝ իր քարտին/բանկային հաշվին:
2. Ծառայության հիմնական պայմաններն են՝

Փոխանցող	«Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգից օգտվող հաճախորդ
Ստացող	«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ հաճախորդ
Փոխանցման արժույթ	ՌԴ ռուբլի
Ստացման արժույթ	ՀՀ դրամ
Փոխանցման եղանակ	«Денежные переводы Юнистрим» հավելված (կամ այլ հարթակ «Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի միջոցով ծառայության մատուցման շրջանակներում)
Ստացման եղանակ	1) ստացողի՝ Բանկում գործող ՀՀ դրամով քարտային/բանկային հաշիվ, մինչև գումարի հաշվեգրումը Ստացողի քարտային/բանկային հաշվին կատարվում է ՌԴ ռուբլու փոխանակում ՀՀ դրամի՝ գործարքի պահին տվյալ ծառայության շրջանակներում սահմանված Բանկում գործող ՌԴ ռուբլու անկանխիկ առքի փոխարժեքով՝ -0.2 AMD, 2) գործարքի փոխարժեքի շեղման չափը ենթակա է փոփոխման ՄԲՀՎ և Գանձապետարանի համաձայնեցմամբ:
1 փոխանցման օրական առավելագույն գումար/ամսական սահմանաչափ միևնույն հեռախոսահամարին	400,000 ՌԴ ռուբլի
Ծառայության աշխատանքային ռեժիմ	24/7
Փոխանցման տևողություն	1 րոպե
Սահմանափակումներ	Փոխանցման հաշվեգրումը հաճախորդի քարտին/հաշվին Բանկի կողմից մերժվում է եթե՝ 1) Հաճախորդը Բանկում ունի գործող միայն Հատուկ հաշիվ/քարտ (այն է՝ Սոցիալական ապահովության հաշիվ/քարտ, Միանվագ դրամական վճարի հաշիվ, Պատվովճարի հաշիվ, Հատուցման հաշիվ/քարտ, Սոց փաթեթի հաշիվ և կառավարության այլ ծրագրերով սահմանված հատուկ հաշիվներ), 2) Հաճախորդը Բանկում չունի ՀՀ դրամով հաշիվ, 3) Փոխանցողը/Ստացողը չի անցել Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ստուգումները, 4) Փոխանցողի կողմից տրամադրված հեռախոսահամարով Բանկում Հաճախորդ չի գտնվել կամ գրանցված է մեկից ավել Հաճախորդ:

Փոխանցման հաշվեգրման եղանակ	1) եթե Հաճախորդը Բանկում ունի մեկից ավելի գործող քարտ/բանկային հաշիվ, ապա փոխանցման հաշվեգրման առաջնահերթությունը տրում է քարտին, 2) մեկից ավելի գործող քարտի/բանկային հաշվի առկայության դեպքում փոխանցման հաշվեգրման առաջնահերթությունը տրվում է ամսաթվով վերջին բացված գործող քարտին/բանկային հաշվին, 3) Հաճախորդի քարտին վարկային գծի առկայության դեպքում փոխանցումը չի հաշվեգրվում այդ քարտին, բացառությամբ այն դեպքի, երբ Հաճախորդն ունի միայն վարկային գծի առկայությամբ քարտ/եր (վարկային գծի առկայությամբ երկու և ավել քարտերի դեպքում փոխանցումը հաշվեգրվում է համաձայն 2-րդ կետի պայմանի):
Փոխանցման կանխիկացման սակագներ	Հաճախորդի ՀՀ դրամով քարտին/բանկային հաշվին հաշվեգրված փոխանցումը կանխիկացվում է (կամ կատարվում են այլ գործարքներ) համաձայն տվյալ քարտի/բանկային հաշվի համար գործող սակագների: